

Խ Ո Ս Ր Ո Վ Ա Յ Ի Ն

ԿՍՄ

ՀԱՅ ՏԱՐԱԳՐԻ ԵՐԳԱՐԱՆԸ

Քերէց և Էդանակէց

Խ Ո Ս Ր Ո Վ



Tous droits réservés

Տպագր. Կ. Յ. ՆԵՐՍԷՍ

Փ Ր Ր Ի Ձ

1920

39866

Handwritten signature

Handwritten number 1120

Խ Ո Ս Ր Ո Վ Ա Յ Ի Ն

ԿԱՄ

ՀԱՅ ՏԱՐԱԳՐԻ ԵՐԳԱՐԱՆԸ

Քերէց և եղանակեց

Խ Ո Ս Ր Ո Վ



Tous droits réservés

Տպագր. Կ. Յ. ՆԵՐՍԷՍ

Փ Ա Ր Ի Ձ

1920

39866



Ե Ր Կ ՈՒ Խ Օ Ս Ք



ԱՅ ԼԵՋՈՒԻ Մասսուեթ-բանիներէն Չայնարկութեան
նշանն է (—), զոր հայ Չայնագրութեան մէջ ալ
կը գտնենք խոսրովային անուանով. այս
բարեբախտ զուգադիպութիւնը մեր անուան հետ՝ թելադրեց
մեզի ԽՈՍՐՈՎԱՅԻՆ անուանել Տարագրի Երգարանս:

Անտեղի չէ յիշեցնել նաեւ որ (—) նշանը, արտայայտիչ
աղերսի, հառաչի, մեղամաղձիկ զգացմանց և յոյսի, պատ-
շաճօրէն կը յատկանշէ երգերուս ոգին:

Նուիրական պարտք կը համարիմ անկեղծ երախտագի-
տութիւնս յայտնել այս առիթով շնորհալի տիկին Օպիի
(Mrs. Obee) և Պ. Քէնըտիի (E. W. Kennedy) որ հաճեցան
նուիրել մեզի իրենց արուեստագէտի աջակցութիւնը երգերուս
դաշնաւորումի բաժինին մէջ:


1913—1919

ԽՈՍՐՈՎ ԱՐՏՈՆՑ



Ode

Տ Ա Ղ Հ Ա Յ Ո Ւ Թ Ե Ա Ն



Շուրջս ու - նիմ' ես ար - քա - յու - թիւնն

Ա-րեւուն, Գեհենն ա - նոնց սր-տին մէջը կը բոց - տայ .

Արարչագործ աշխատութիւնն ես շարժուն . Արեւ մըն ալ ես ե - ղայ .

Տ Ա Ղ Հ Ա Յ Ո Ւ Թ Ե Ա Ն

Շուրջս ունիմ' ես արքայութիւնն արեւուն ,
Գեհենն անոնց սրտին մէջը կը բոցտայ .
Արարչագործ աշխատութեամբ ես շարժուն
Արեւ մըն ալ ես եղայ...:

Երբ ապագան դէմըս նստած կը ժպտի
Զի' փեսեր ինձ սպանալիքն անցեալին...
Հիւժախտաւոր կուրծքով գիշերն այս մըթին
Լոյսին մէջ շուտ պիտ' մեռնի...:

Այդ մութ գիշերն անցուցինք մենք հրակումով :
Բա՛ւ է զիրար հալածեցինք, բա՛ւ, այսքան.
Ջարնենք հիմա մեր բաժակները սիրով
Ապտակներուն հին փոխան...:

Թող ըլլանք մենք արքայութիւնն արեւուն,
Գեհենն անոնց հոգւոյն մէջը թող բոցտայ .
Հողի՛ն, հնոցին յառենք մեր աչքը առտուն,
Որ իրիկուան դէմ խնդայ:

Արի՛ք, ընկերք, կուրծք տանք ուժով քաջալանջ
Կոհակներուն որ կը թքեն մեր ճակատին .
Ասուկիսին չը դարձնենք զուր ականջ,
Յառաջ դիմենք աննահանջ:

Աւագ-Ուրբաթը անցուցինք սրտխորով,
Խաչելութեան չըկա՛յ պատկեր ալ հիմա .
Եւ տաճարի վարագոյրին հերձնումով
Ջահն ի խորան կը շողայ:

Եւ անոնք որ մարել կ'ուզեն այդ ջահը,
Ու կործանել Հայու հոգւոյն այդ զահը,
Գաճաճնե՛ր են, չըպիտ' հասնին մինչեւ հոն,
Հա՛յ ժողովուրդ, սիրտ առ, օ՛ն...

Long live "Unity"

«ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՑԸ»

Մի՛րտ առ, մի՛րտ առ, ժո - ղովուրդ հա - լա - ծեալ, վը - հատ.

Դա - րա - ւոր ո - վ աղգ զա - զա - փա - րա - պաշտ. Ձե - ն

Հեն զաւակներդ ա - պե - րախտ կամ վատ. Ձեռք ձեռ - քի գոր -

ձեն, կը համբուրուին հաշտ: Կեց - ցէ, Կեց - ցէ Միու - թիւն

Կեց - ցէ այժմ յա - ւէտ, իր անձ - նա - նը - ւէր ջա - նիւք փըր - կա - ւէտ:

«ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՑԸ»

Մի՛րտ առ, ժողովուրդ հալածեալ, վըհատ.
Ո՛վ դարաւոր ազգ գաղափարապաշտ.
Ձե՛ն, չե՛ն զաւակներդ ապերախտ կամ վատ,
Ձեռք ձեռքի գործեն, կը համբուրուին հաշտ:
Կեցցէ՛ Միութիւն, կեցցէ՛ այժմ, յաւէտ,
Իր անձնանուէր ջանիւք փրկաւէտ:
Նախախնամութեան իբրեւ մանանայ,
Տեղայ ամէն դի սէր և մամոնայ —
Որքին հաց բաշխէ, մըշակին՝ գութան,
Դպրոցականին գրէիչ և մատեան.
Կեցցէ՛ Հայկական Միութիւնս յաւէտ,
Գործն իր իմաստուն, ջանքն իր փրկաւէտ:
Իշխան և մըշակ, գուսան, գիտնական
Երկրի ծայրերէն թեւ թեւի կուտան,
Թող մըխիթարուի հէք Մայրն-Հայաստան.
Երկինք պաշտպանեալն օրհնէ և պաշտպան.
Ձը յուսահատինք, չէ՛, հա՛յ եղբայրներ,
Մենք պիտի ապրինք դեռ պայծառ դարեր:
Յառա՛ջ, Միութիւն, օն անդր, մի՛ կասիր,
Վարէ՛ գործունեայ կեանք մը անբասիր:
Պարպե՛նք եղբայրներ, պարպենք Հայկայ ձեռք,
Բաժակ փրկութեան, դառն արիւնէն ետք:
Կեցցէ՛ Միութիւն այժմ և յաւիտեան
Եւ մըխիթարուած բերկրի Հայաստան:
Յիրուցան ազգն իմ, ա՛զգ հալածական,
Իբր ընտանեաց մը անդամներ պանդուխտ,
Ծեր մայրն և մատղաշ եղբարքը հոգան,
Եւ պանծալի մի միակ ունին ուխտ. —
Ապրիլ և մեռնիլ սիրովն հին ազգին.
Թող ապրի՛ ուրեմն Միութիւնս անգին:



Exiles' pleading

ԱՂԵՐՍ ՏԱՐԱԳՐԻՆ

Andante

Ամբ իմ անցին և փոխեցան վարսք յալիս, վատեցին աչք

իմ յար-տուր. Տա — լայք վը-տակն և խառնեցէր անդ յԱլիս

Որ ներ-կե-ցա — լըն բո-տուր Տա — լայք վը-տակն

և խառ-նե-ցէր անդ յԱլիս. Որ ներ-կե-ցա — լըն բո-տուր :

ԱՂԵՐՍ ՏԱՐԱԳՐԻՆ

Եկայք առ իս և բերէք բան աւետեաց
Եւ ասացէք, զիա՞րդ գնան
Ի ձորամէջս գետք և առուք հայրենեաց.
Առէք ծաղկունս ինձ գունեան:

Ամբ իմ անցին և փոխեցան վարսք յալիս
Վատեցին աչք իմ յարտուր,
Տարայք վտակն և խառնեցէր անդ յԱլիս
Որ ներկեցաւ ինձ բոտուր:

Ծրդօտ, ծաղիկ, կամ տունկ գոնեայ ազագուն
Մայրագոմէն տուք ինձ ցոյց,
Համբուրեցից տխեղձ շրթամբքն իմ անգոյն
Մեռայց յայնժամ անտրտունջ:

Եկայք մանկո՛ւնք, երգեցէք ե՛րգս հայրենի,
Ըսփոփանաց բարձէք ձայն.
Ուրոց ճապկաց զոստունն ի սար Դավրայի
Մըմունջն աղբերց Բիւրական:

Եկայք մանկունք հալածականք նորահասք.
Զիա՞րդ վարին արդ կուռ հասկք.
Լերինք հպարտք ըզգետափամբք բարձրաբերձ
Ա՛նդ են դեռ այնք երկնահերձ:

Եւ լայնանիստ վանաց զայգւոյն ասացէք.
Է՞ դեռ պարարտ և յուռթի.
Քանի՞ մըշակս, մատաղ հովիւս անդ տեսէք,
Քանի՞ ի գործ գերանդի:

Այլ զի՞ եղեւ ահա այդպէս մընայք լուռ
զՁեզ տեսանեմ ի թախիծ
Այսքան վաղ, վայ, ծանօթ են ձեզ սուգ, սարսուռ.
Ո՛ր ըզշրթունս ձեր եխից:

Երթայք անդրէն, որդիք, յերկիրդ այդ այրեաց
Յաշխարհդ որբոց, յանձկալիդ,
Ի գերեզմանն երթայք մօրն իմ և ի լաց
Բերէք ինձ ափ մի հող թաց:

Ապա ի հող և զիս, որդիք, իջուցէք,
Հողն այն մի ափ խառնելով
Աճիւնոցն իմ, անդրէն յաշխարհ մեր դարձէք
Մինչ մանուկն էք քաջկորով:

Անդ այրւոյն հէգ՝ ժրպիտ, որբին՝ պատմութեան
Ըստփականաց հեթեթել.
Տամ ձեզ երդնուլ, երթայք. իցէ՞ք դաւաճան
Հատանել մօրդ յուսոց թել:

Նըժդեհ անկեալ աստ ընդ երկնիւք խաւարին
Անցին աւուրքս անըստփոփ.
Ահա ըզգամ, ֆաշքս ի լուսոց խաւարին.
Դիք ի շիրիմ զիս ամփոփ:

Ապա երթա՛յք. . .

Այլ լուարուք ըզհուսկ բանն իմ մի եւս գամ.
— Որդիք, լա՛ւ է բիւր անգամ
Մեռանիլ քան թէ կալ ի կեանս՝ թէ չ՛ետուն
Երկինք ըզձեր բընիկ Տուն
ԸզՀայաստան վեհանուն:



Ք Ե Զ Ի, Ո՛Վ «Մ Ի ՈՒ Թ Ի Ի Ն»

(Այս երգը կ'երգուի «Տաղ
Հայուքեան» եղանակով):

Հայ գուսանը դարուց ի վեր երգեր է,
«Երբոր օտարն անգութ ըզմեզ կը գերէ.
«Գէթ ճիտերնէս յիրար կապող սա շղթան,
«Թող պահէ մեզ անբաժան»:

Հայ կըղերը աղօթեր է դարուց վեր...
Նոյնն են սակայն դեռ մեր ցաւքը կարեկէր.
Մայրն է լացեր, ողբացեր հայրն անճարակ.
— Եղանք բախտին մենք ճարակ:

Ու եկաւ օրն երբ ծովէ ծով Հայք պանդուխտ,
Կարկռեցին ձեռք իրարու, ըրին ուխտ, —
Ապրիլ, մեռնիլ ազգին համար միմիայն
Տըւին իրենց երկլուման:

Ողջո՛յն քեզ արդ, ո՛վ Միութիւն Հայկական,
Որ մըշակին հայթայթես հող ու գութան.
Պատուաբեր գործ՝ այրւոյն, որբին զիրք և հաց,
Եւ անոքին կտրես լաց:

Կեցցէ՛, կեցցէ՛ մեր «Բարեգործն Ընդհանուր»
Ոյր անդամ են փաշա, գեղջուկ, զիտնական.
Քամելէ ետք կարմիր բաժակ ցըմըրուր...
«Կենացդ» հիմա պատուական:



Cheer up motherland!

ՍԻՐՏ Ա՛Ռ, ՄԱՅՐԻ՛Կ

f

Սըր-տա-ւուչ ձայնն Հա-յաս-տա-նիս . Ա՛խ ,

Կա-ն-չէ զիս . Պա — ն դուխտ մնամ ես ա-ն տէր ան-յոյս .

Վա՛յ, վա՛յ զի — խուս . Տա-րա-ժա-մի դարձեալ օ-րը խա-ւար

ff

պա-տէ . Գա-լա-րի վիշտ սրտիս խորը, կեանքս ի՛նչ վատ է : *fff*

ՍԻՐՏ Ա՛Ռ, ՄԱՅՐԻ՛Կ

1. Սըրտառուչ ձայնն Հայաստանիս
Կը կանչէ զիս .
Պանդուխտ մնամ ես անտէր , անյոյս
Վա՛յ , վա՛յ զիւրուս :
Տարածամի դարձեալ օրը ,
Խաւար պատէ .
Գալարի վիշտ սրտիս խորը ,
Կեանքս ի՛նչ վատ է :
2. Կա՛լ-կա՛լ աչօք չուառ Մայր իմ ,
Կը տեսնեմ քեզ
Երագիս մէջ , և չարչարուիմ
Ա՛հ , բոցակէզ :
Մերթ կարծեմ քեզ խոնաւ աչքով
Նստած իմ քով :
Մերթ իբր նոր-հարս փթթինազարդ ,
Ցնծամ հոգևով :
3. Ա՛խ , Հայաստան , անո՛ւշ Մայր իմ ,
Տապիմ , այրիմ —
Քու կարօտով . օրերս են մոլթ ,
Աշխարհ անգուլթ :
Բայց հերի՛ք լաց , անձն իմ , սի՛րտ առ ,
Այգը պայծառ
Կը մերձենայ , փախնու խաւար ,
Ցնծա՛ն , մի՛ լար :



Forgive thy wandering son!

ՆԵՐԷ՛, ՄԱՅՐ, ԿԱԼԱՆԱԻՈՐ ԶԱԻԱԿԻԴ

Մի սր - տա - կե - դէք ձայն կը կան - չէ

զիս. կը ձանձ-նամ՝ դա - նի ձայնն Հա - յաւ - տա -

նիս. Աք - տա - րա - կան պարզ նժ - դեհ մը չեմ՝

ես, Ի - մին - նե - րուս սէրն կա-մեր է աշտ-պէս:

(Շարունակութիւն)

Հա - յաւ - տան մայր Ի - մ: կարօտովդ աչրիմ, սիրտ տուր և սի -

-րա ա - ու. Մերձ է աչգ պաշ-ճա - ու: Թա - րա - լա - լա...

ՆԵՐԷ՝ ՄԱՅՐ, ԿԱԼԱՆԱԻՈՐ ԶԱԽԱԿԻԴ

Մի սրտակեղեք ձայն կը կանչէ զիս,
Կը ձանձնամ զանի. ձայնն Հայաստանիս:
Պարզ աքսորական նժդեհ մը չեմ ես,
Իմիններուս սէրն կամեր է այսպէս...

Ներէ, Հայաստան,
Գութով մայրական.
Թող ինձի քիչ մ'ալ
Հոս կապուած մընալ:

Երբ տարածամի օրը, և ժըխոր
Դաւրսի աշխարհին դաղրի, այն ատեն
Ընկղմած միտակ սեւ մըտածմանց խոր,
Միշտ քեզ մըտածեմ. մայր իմ՝ սրգաւոր,

Քունիս մէջ ալ դուն
Հետս ես իբր արթուն.
Հոկ հոն կըստիւփուիմ
Հայաստան, մայր իմ:



Յնցողներու մէջ, խոնաւ աչքով
Երբեմն տեսնեմ քեզ նստած իմ քով:
Մերթ ալ իբրեւ հարս զարդարուն, զուարթ.
Յնծերգէ հոգիս լցուած նոր կեանքով:

Հայաստան մայր իմ.
Կարօտովդ այրիմ.
Սիրտ տուր և սիրտ առ.
Մերձ է այդ պայծառ:



pilgrims lament

ՆԺԴԵՅԻՆ ՈՂԲԸ



39866

Հայ Տարագրի երգչախումբ



ՆԺԴԵՅԻՆ ՈՂԲԸ




1. Սաստիկ ցաւ մը սիրտս է պատեր
Կուրծքըս կ'ըսես կը պայթի
Ի՞նչ պիտ' ըլլամ, ի՞նչ եմ եղեր .
Ա՛խ, գլուխս կը ցնդի :
2. Եղբարք, եկէ՛ք, ձեռք ձեռքի տանք,
Տեսէ՛ք մեր կրօնք, մեր լեզուն
Կը գտնուին ի մեծ վտանգ .
Ինչպէս և կեանքս ազագուն:
3. Ձեռք ձեռքի տանք և մեր անուն
Հպարտ դարուց քառասուն
Ժառանգ թողունք մենք անարատ
Մեր որդւոցը հարազատ:
4. Անգո՛ւթ երկինք քիչ մըն ալ դուն
Շարժէ՛, փութա օգնութեան .
Կ'աղօթենք քեզ առտու, իրկուն
Դուն կը խնդաս մեր վըրան:
5. Մարի՛կ մարիկ, սրտիս վրայ
Վա՛յ բացուեր է մեծ ետրայ
Արծուի աչքերս կուրցան լալով
Օ՛հ, խենթենամ պիտ' հիմայ :
6. « Մեռնի՛ր կ'ուզեմ » ըսի երէկ
Այսօր սակայն կը զղձամ,
Ցաւերս հազար, փափաքս է մէկ —
Սուրբ Հայրենիքըս տեսնամ— :
7. Սաստիկ ցաւ մը սիրտս է պատեր
Կուրծքըս կ'ըսես կը պայթի
Ի՞նչ պիտ' ըլլամ, ի՞նչ եմ եղեր .
Ա՛խ, գլուխս կը ցնդի :



The return

ՎԵՐԱԴԱՐՁԸ

Lento



Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ Ը



... Քա՛, աս ի՞շտար մեծցեր ես դուն...
Ա՛յ, սիրեր եմ պոյն ու պօսուեն...
Աս ի՛նչ պեխեր, մօրուք երկար.
Ո՛ւր տեղէն ալ գնացիր գտար:

... Քա՛, շէքէրու, ձուն գալ գլխուս.
Նայէ՛, եկուր, քա աս մա՞ղ է.
Փէրչէմները ո՛ւր են տըղուս.
Տէփէն ինչո՛ւ ասանկ տաղ է:

... Քա՛, ո՞վ փետտեց զլուռ մագեր,
Փըշտեց դուր երեսդ ու ճիտ.
Ո՞վ փեթտեց բերնիդ մարգրիտ.
Կէօզլի՞ւկն ի՛նչ է, ատ էր մնացեր:

— « Հօրքուր, մօրքուր, է՛յ քեռեկին,
Ե՛լ, պագ մը տուր տալոջդ տղին ».
Պագ աչքերէս, պա՛գ գըլուխէս,
Պիտի նորէն կէնճանամ ես:

Հօրքուր, մօրքուր ու քեռեկին
Երեսներս ու աչքս պագին.
Ձը թարմացա՛յ, պագերդ ի դո՛ւր.
— Ա՛խ, կը պակսէր ինձ մօրս համբոյր...





Swan Song

ԿԱՐԱՊԵՐԳ

« Թուրքերն անկեց անցեր են,
տուգ պատեր է եւ աներ »:

Վ. ՀԻԿՈ



ԿԱՐԱՊԵՐԳ

« Les Tures ont passé là, tout est ruine et deuil. »

Victor Hugo

Պալատներն ինձ բանտ դարձեր են .

Օգո՛ւտ չկայ կէնճէն , ծերէն .

Կուլա՛մ , մարդիկ խլացեր են :

Մութ գերեզման բացուէ՛ , բացուէ՛ .

Գիրկըդ առ զիս , ետքը գոցուէ :

Ուխտի ինկայ սրբերու դուռ ,

Ծով ծով արցունք թափեցի զո՛ւր .

Զունիմ քովիկս աղբար կամ քուր .

Մութ գերեզման , բացուէ՛ , բացուէ՛ ,

Գիրկըդ առ զիս . վրաս գոցուէ :

« Զարթի՛ր , զարթի՛ր , Մա՛յր Հայաստան ,

« Զաւկունքդ ահա ելեր կուգան »

Իզո՛ւր կանչեց տէրտէր պապան .

Ումուտ չկայ ազատութեան ,

Բացուէ՛ , բացուէ՛ սեւ գերեզման :

Ծովերուն մէջ ձուկն է սմբեր .

Ծառին վրայ դուռ պապնծեր .

Սեւ ազոռներ դաշը թառեր ,

Սեւ են օրերս , գիշերներ սեւ ,

Խաւարեր են լուսին , արեւ :

Էտինք կ'ըլլայ , երդիք կ'ըլլեմ

Ականջըս կախ մըտիկ կ'ընեմ

Թէ կոչնակին ձայնը կ'առնեմ .

Ժամն է գոցուեր , տէրտէր չկայ .

Աշխարհ փրկեր , Աստուած չկա՞յ :

Կարկըչուն հաւս վրդիկը ծուռ ,

Բընկըլնոցին մէջն է մեռեր .

Ձէլէնկ-չէլէնկ խօրօղ , աքլուռ

Մէկ ոտից վրայ քար են կտրեր ,





Շէն Հայաստանն է դարտրկեր...



Orphan's pleading

ՀԱՅ ՈՐԲԻՆ ԱՂԵՐՍԸ

Adagio



ՀԱՅ ՈՐԲԻՆ ԱՂԵՐՍԸ

« Զիս ձեր տունը կ'ընդունի՞ք ,

« Ո՛վ բարեսէր ընտանիք »

Կը պաղատի լալազին ,

Անտէրունջ որբ մը մանկիկ .

Եւ օրհնութիւն կը կարդայ —

« Տէ՛րը ձեզի հաղար տայ :

Եղբայր ու քոյր՝ չորս հատ են ,

Որբ մընացած ջարդերէն .

Բոպիկ, սոված, դոնէ դուռ ,

Դողդղալով տրտում, լուռ .

« Սի՛րտ ունեցէք » կը թզկայ .

« Մե՛նք ալ Հայ ենք, Բրիստոնեայ :

« Թէ՛ որ հացի տեղ բաղարջ

« Ուտէք , սոխի տեղ՝ հաղարջ ,

« Զեր սրտեղը կ'աւելնայ .

« Գու՛թ ունեցէք մեր վրայ ,

« Փողոցներն ենք մընացեր

« Անօթի , մերկ և անտէր :

« Հազարներ կան մեզի պէս ,

« Պատերուն տակը նստած ,

« Վըզիկնին ծուռ տըխրամած .

« Ըսէ՛ք , խնդրեմ վերջապէս ,

« Թէ՛ ձեր սիրտը չը շարժի ,

« Մեր վերջը ո՛ւր կը հասնի :

« Աշխարհք կարծես պատեր մութ .

« Մարդիկ դարձեր են անգութ .

« Ո՛վ եղբայրներ հեռաւոր ,

« Հոս ամենքըս սըգաւոր

« Աչքերնիդ ձեզ կը դարձնենք ,

« Զեզ ազգակից որբեր ենք :

« Մի՛թէ ձեր քուն կը տանի՞

« Երբոր մտնէք անկողին .

« Մենք կը մընա՞նք կենդանի

« Թէ՛ շոայլ ըլլաք դուք : Հողին

« Պիտի յանձնեն մեր մարմին

« Վարձք , պատիժ տայ ձեզ երկին :

« Դուք յԵւրոպա երջանիկ

« Կ'ուտէք , կ'ըմպէք , կ'ուսանիք .

« Զեր հաճոյքէն դոյզն մաս ,

« Պիտի հոգար մեր պակաս :

« Մի՛ մոռնաք, օ՛ն , Հայ մանկունք

« Մեր սրտին վէրքն է խորունկ .

« Երազնուդ մէջ չէ՞ք տեսներ

« Թափառական Հայ որբեր .

« Փողոցները գալով ման

« Դիմեն շիտակ գերեզման :

« Գգուանքէ գուրկ խեղճ ենք մենք .

« Յոյս տուէք որ լքուած չենք :

« Շուտով , երբ մենք ալ մեծնանք ,

« Զենք խընայեր ճիգ ու ջանք ,

« Կ'օգնենք մենք ալ մեր կարգին ,

« Սըգաւորին , տընանկին » :

« Յիշեցէ՛ք , Հայ պատանիք

« Զեր եղբայրներն անտանիք : »



maiden's prayer on the battlefield

Հայ Աղջիկն ի Դաւաթին Մարտի

Օրհ - նեալ է մեր Աստ - ու - ծ. Կ'օրհ - նե մեր

զէնք, մեծ օր - ուանս այս հա - սած, ե - ր ջա - նի - կ ենք:

con moto

Ան - խը - նա - յ ջար - դը - Վի, ջար - դա - րա - րն ե - րէ - կի, վա - տո - գին

եննդ: վա - տո - գին եննդ: վա - տո - գին եննդ: վա - տո - գին եննդ:

ՀԱՅ ԱՂՋԻԿՆ Ի ԴԱՎԱԹԻՆ ՄԱՐՏԻ

1. Օրհնեալ է մեր Աստուած.
Կ'օրհնէ մեր զէնք,
Մեծ օրուանս այս հասած
Երջանիկ ենք:
Անխտիր ջարդըւի,
Ջարդարարն երէկի,
Վատոգին նենգ:
2. Մեր հոգիք, ընկերներ.
Ձեզի զուրպան.
Ձեզի հետ անվեհեր
Կռուիլ կ'երթան.
Երբ հատնի մեր փամփուշտ,
Հատնի՛ վատն արիւնոուշտ,
Գազա՛ն անկուշտ:
3. Բահ, բըրիչ և արօր
Մընան անտէր.
Եղերգ, ո՛չ թէ օրօր
Երգեն մայրեր,
Վատն անխիղճ շանսատա՛կ
Կորչի անյիշատակ:
Հապ՛օ՛ն, քաջեր:
4. Թող լսէ՛ մարդկութիւն
Լացէն մեր ետք
Մեր վերջին արութիւն.
Օ՛ն, Հայկայ ճետք:
Մարդ, լ'երկինք են անհոգ.
Թշնամին՝ անողոք:
Ջնջուի՛ իր հետք:
5. Ջարնե՛նք, զարնե՛նք անխնայ
Հոսի՛ արիւն.
Հոսեց մերն մինչ հիմայ,
Արդ թշնամուն:
Կտրիճներ, քոյրե՛ր կոյս.
Կոխն է մեր միակ յոյս:
Բա՛ւ գերութիւն:



a Hyem before the battle

ՊԱՏԱՐԱԳ ԶՆԻԱՐԱՅՐԻ

Lento Relig.

cresc.

dim.



cresc.

ff



dim.

f



ሃ ቡ ት ት ደ ን ሠ ቡ ሠ ደ

ፔ ሶ ዓ. ግ ሊ ስ ሊ ሶ ሊ ዓ. ት

1. Ոստիւր, մարեց եղբարց մեր արեւ.
Վալքապար լացինք խորանիդ առջեւ.
Բնւ է, Տէր. փրկէ մեր կեանք լ'արտորայ,
Ալէլուիա, ալէլուիա:
2. Մոռբ, Տէր զօրութեանց, բնակեալդ ի յերկին,
Սրբէ մեր սիրաը, գործը մեր ձեռքին.
Աջըդ պահապան լինի մեր վըրայ.
Ալէլուիա, ալէլուիա:
3. Անապատին մէջ պահեցիր քառսունք.
Թափեցիր մեզ պէս արլւն արտառունք.
Այլ պարտեցիր հոսկ դժուր, սատանայ.
Ալէլուիա, ալէլուիա:
4. Դարձի բէր, Աստուած, թշնամին մեր վատ
Թաղ չարլւնոտի մեր խոփն անարատ.
Դրտամբ, ոչ արեամբ, երկիրս արբենայ.
Ալէլուիա, ալէլուիա:
5. Իսկ թէ վերջապէս պիտի գայ կըռիւ.
Թող իշնայ խուժանն ինչպէս չոր խոիւ.
Հաւածուած մշակն Հայ հանգստանայ.
Ալէլուիա, ալէլուիա:
6. Մուրբ պատարազըս բաց երկինքի տակ
Բնկալ տէր Աստուած, օրհնէ մեր վաստակ.
Փրկէ երկիր մեր, փրկէ ազըը Հայ
Ալէլուիա, ալէլուիա:
7. Օրհնեալ յիշատակն անոնց որ ինկան.
Այլ վերականգնի փառօք՝ Հայաստան.
Լուռ, աւեր երկիրս՝ վաղը շէն՝ կարգայ
Ալէլուիա, ալէլուիա:

Enough!

ԱՆՔԵՐԻՔ

p

Օն, քաջ ե - ղիր, և վե - հան - ձըն հէք մարդ կը Լը -

f *mf* *p*

սեւ. թէ բը - նու - թիւն քեզ դա - տա - պար - տեր է մահ - ուան, ծառ մը

f

տըն - կէ դա - ւակ ձը - նիր, եւ այս - պէս յա -

p

ւեր - ժա - ցու ր կեանքն և մա - հու խըն - դն վրան:

ԱՆՔԵՐԻՔ

Ա՛յ տաղտկացոյ սա միագոյն երգերէն. —

— Սիրտս է շիրիմ, երազըս՝ սին, « սէրս » անգութ:

Հեղդ արարած տըկար, լւէ, և վերէն

Դիտէ վատը, ճահիճը գարշ, շիրիմ մութ:

Կանգնէ հպարտ ժայռիդ կառար, անկէց ալ

Բնց թեւերըդ, արծիւին պէս սլացիր վեր.

Շիւղն ու կաղնին, ծովուն կոհակը ճալ ճալ

Սուր աչքերուդ երեւին մի, անտարբեր:

Սիրականիդ սրտին մէջ իբր ի խորան

Դուն բազմեցար քանի մը օր, թող բաւէ.

Շահեցար մերթ մրցանակներ որ կորան.

Յետոյ: Մի թոյլ տար որ ընկերդ քեզ դաւէ:

Քաշուէ ավիկ մը պարտէղիդ անկիւնը,

Ողբերուդ ալ երգը պիտ' տայ պատասխան:

Երգէ, և պիտ' ողբերդ լըսես զանգիւնը:

Այս է օրէնքն, երբոր դու լսաս, այլք խնդան:

Օ՛ն, քաջ եղիր, վեհանձն հէգ մարդ, կը լսես.

Թէ բնութիւն քեզ դատապարտեր է մահուան,

Ծառ մը անկէ, զաւակ ձընիր, և այսպէս

Յաւերժացուր կեանքն և մահու խնդան վրան:

Վնէ, տաղտկացոյ սա միագոյն երգերէն

Սիրտս է շիրիմ, ազգըս՝ թշուառ, « սէրս » անգութ:

Ծոյլ արարած տըկար, լւէ և վերէն


Դիտէ վատը, ճահիճը գարշ. շիրիմ մութ:



for one kiss

ՄԷԿ ՊԱՉԻԿԻԴ ՓՈԽԱՐԷՆ

Cantabile con moto



ՄԷԿ ՊԱՉԻԿԻԴ ՓՈԽԱՐԷՆ

Ես չեմ ուտեր՝ քեզի կուտամ,
 Պատառիկ մը չոր հացըս.
 Ցաւերս ինծի, բայց թէ խնդամ,
 Ուրախութիւնս քեզ կուտամ,
 Ես չեմ ուզեր հանգիստ մահիճ,
 Փոյթ չեմ ըներ տօթակէզ
 Աւազը, չոր տախտակ կամ խիճ,
 Անկողնիկս կուտամ քեզ:
 Ես չեմ խմեր գինի կամ ջուր,
 Ունեցածս կուտամ քեզ:
 Թէ չունենամ, տըրտում տըրտուր,
 Գիշեր ցորեկ կուլամ ես:
 Եւ արցունքըս հաւաքելով
 Արեւին տակ կը դնեմ
 Աղին ինծի զուտ պահելով
 Շողին ժողովեմ կուտամ քեզ:
 Թէ ծովերը իրենց խորքէն
 Անհատնում դանձ դուրս նետեն,
 Չեմ պահեր ինձ նոյն իսկ հիւլէն
 Ամէնը մէկ կուտամ քեզ:
 Թէ օր մըն ալ կեսար ըլլամ,
 Նաբոլէօն ահարկու,
 Եւրոպայի տէրը դառնամ
 Ամբողջովին քեզ կուտամ:
 Ծովէ ի ծով թէ որ շրջին
 Իմ բիւր նաւեր, նաւաստին,
 Եւ Ասիոյ կայսրն ըլլամ
 Հինախաթանը քեզ կուտամ:
 Օգապարկի տորմիդ մ'հսկայ
 Եթերին մէջ թէ ման գայ.
 Բոլոր աստղերն վարդերու պէս
 Փունջ կը կապեմ կուտամ քեզ:
 Իսկ թէ ըլլամ պուշտ անգլին
 Վիքթոր Հիւկօ Լամարթին,
 Միշտ քու վրայ երգ կը գրեմ
 Խելքըս, միտքըս կուտամ քեզ:



sing nightingale!

Յ Ն Ծ Ե Ր Գ Է Պ Լ Պ Ո Ւ Լ

ad lib.

Հա — յու — չի — ն հա — տեր չի — դա —

կի սե — մին, ձա — խ — րա — կ կը մա — նէ, Վե — րը





աբ — թին մէջ աշ — խոյժ պա տա — նին, վա — րէ

ու ջա — նէ, վա — րէ ու ջա — նէ :

Յ Ն Ծ Ե Ր Գ Է Պ Լ Պ Ո Ւ Լ...

-
1. Հայուհին նստեր հիւղակի սեմին
Ճախրակ կը մանէ,
Վե՛րը, արտին մէջ, աշխոյժ պատանին
Վարէ ու ցանէ :
 2. Անամպ երկինքէն սիրահար լուսնակ
Քեզի կ'ունկնդրէ,
Ճողողէ՛ ճի՛ւ ճի՛ւ, հայրենի սոխակ
Տարփուհիդ ընտրէ :
 3. Արի՛, հնչեցո՛ւր . անուշիկ պլպուլ
Երգերդ քաղցրիկ .
Մարմանդին վրայ ոտոտտէ անդուլ
Սիրուն Հայ մանկիկ :
 4. Կաշմբուն հովին աղբիւրին առջեւ
Անուշ եարին հետ
Խօսքի բոնուած մոոցեր է գառն , և
Մ'նացեր է ետ :
 5. Գառնուկն արօտէ մինակ համարձակ
Կ'երթայ դէպի դեղ .
Մինչ հովուիկն եարին պաշիկ ու փնջակ
Կուտայ սրտաղեղ :
 6. Կ'երգէ պլպուլը , կը խաղան տղաք
Շէն է գեղ քաղաք .
Լուսինը ժպտի , բուրեն վարդ շուշան
Կ'ապրի Շաւարշան :
 7. Հովտին մէջ դաւար՝ մրմնջէ վտակ .
Հեծէ զինչ ջուլթակ .
Յուզուի տխուր ամպ , արցունք թափէ վար
Իբր ստեղնաշար :

Այլ եղանակ նոյն երգին



8. Եւ ազատութեան զոհից մեր հոգուն
Ամէն օր առտուն,
Ծոցն անտառին խիտ պատարագ կ'ըլլայ
Եւ մկրտութիւն:
9. — Հովուիկը սիրեց եարն իր աղւորիկ,
Պլպուլը տեսաւ
Երգով պսակեց զանոնք կին-էրիկ,
Ազա՛տ, երջանի՛կ:
10. Ժայռերու ծերպէն բուեր հեռացան,
Մեղուն ժրաջան
Հոն դրաւ նոր բոյն, կտուրէն ծաղկածիլ
Կրկնայ արագիլ:
11. Հնչեցնուր անվախ ա՛յ սիրուն պլպուլ
Անուշ դայլայիկ.
Այգիներուն մէջ աշխատին անդուլ
Ազատ Հայորդիք:



Eat drink and merry

ԿԵՐ, ԱՐԲ ԵՒ ՈՒՐԱԽ ԼԵՐ

Allegro

Այն որ երկնից կապոյտ կամարն ըստեղծեց,
Պայման դրաւ որ զայն զխտելով մոռնանք ցեց.
Արդ, ընկեր, ա՛ռ սա բաժակ պարզ բիւրեղէ,
Ես լընում զայն հին գինիով, դուն ըմպէ՛,
Պիտի մեռնինք վաղն, ընկեր,
Այսօր՝ ուրախ՝ արբ եւ կեր:
Եկո՛ւր, ընկեր, երթանք հեռու, հովտին մէջ
Հոն՝ ուր արեւը կը շողայ դեռ անշէջ.
Վըտակներուն նըստած ափունքն երգելով —
Ըմպենք, եղբայր, զո՛ւր կը մաշինք հոգերով.
Վայլենք ընկեր, կեանքն այս սուղ
Մահուան չեկած մատախուղ:
Օ՛հ, անուշ կոյս, ե՛կ համբուրուինք գիրկընդխան,
Թող քաղցրանան սա մեր օրեր կարճ ու դան,
Կեղտոտ, կոռուղ քաղաքներէն անդ հեռու
Թեթեւագնաց իբր այծեմիկ պարենք, ու,
Երգենք. աղջիկ նազելի՛
Վայլենք սէ՛ր, կեանք փարելի:
Թռչունն օդին մէջ կը ճախրէ թեւազատ,
Հողին վրայ կամ ծաղկին գիրկ ժիր միջատ
ԸՄտեղծագործ աշխատութեան անձնատուր՝
Աճին, հրճուին, այո՛ անդուլ, ամենուր,
Մահուան հանդէպ անտարբեր,
Այս բընութեան է պատուէր:
Երջանկութիւնն արեւուն պէս կը ծագէ,
Բայց հարկ է որ առաջ աքլորը երգէ...
Կ'արժէ՛ ապրիլ. մահէն մեղ ի՛նչ շահ, ընկեր.
Չարը ուղղել որո՞ւ բերնին է ինկեր.
Լի՛ց, ընկեր լի՛ց, սա ցփին
Չուարթացնէ քու հոգին:
Մանուկներու սերտ մտերիմ ծերք, ինդո՛ւն.
Մի՛ փոխանցէք ձեր սընամէջ երազներ,
Պա՛ր քաշեցէք սա խոտին վրայ դալարուն
Որու ներքեւ միայն փտին մեռեցներ...
— Մեռեն անշա՛հ, երազ՝ սին —
Այսօր գինիք թող հոսին:

ԿԵՐ, ԱՐԲ ԵՒ ՈՒՐԱԽ ԼԵՐ

Այն որ երկնից կապոյտ կամարն ըստեղծեց,
Պայման դրաւ որ զայն զխտելով մոռնանք ցեց.
Արդ, ընկեր, ա՛ռ սա բաժակ պարզ բիւրեղէ,
Ես լընում զայն հին գինիով, դուն ըմպէ՛,
Պիտի մեռնինք վաղն, ընկեր,
Այսօր՝ ուրախ՝ արբ եւ կեր:
Եկո՛ւր, ընկեր, երթանք հեռու, հովտին մէջ
Հոն՝ ուր արեւը կը շողայ դեռ անշէջ.
Վըտակներուն նըստած ափունքն երգելով —
Ըմպենք, եղբայր, զո՛ւր կը մաշինք հոգերով.
Վայլենք ընկեր, կեանքն այս սուղ
Մահուան չեկած մատախուղ:
Օ՛հ, անուշ կոյս, ե՛կ համբուրուինք գիրկընդխան,
Թող քաղցրանան սա մեր օրեր կարճ ու դան,
Կեղտոտ, կոռուղ քաղաքներէն անդ հեռու
Թեթեւագնաց իբր այծեմիկ պարենք, ու,
Երգենք. աղջիկ նազելի՛
Վայլենք սէ՛ր, կեանք փարելի:
Թռչունն օդին մէջ կը ճախրէ թեւազատ,
Հողին վրայ կամ ծաղկին գիրկ ժիր միջատ
ԸՄտեղծագործ աշխատութեան անձնատուր՝
Աճին, հրճուին, այո՛ անդուլ, ամենուր,
Մահուան հանդէպ անտարբեր,
Այս բընութեան է պատուէր:
Երջանկութիւնն արեւուն պէս կը ծագէ,
Բայց հարկ է որ առաջ աքլորը երգէ...
Կ'արժէ՛ ապրիլ. մահէն մեղ ի՛նչ շահ, ընկեր.
Չարը ուղղել որո՞ւ բերնին է ինկեր.
Լի՛ց, ընկեր լի՛ց, սա ցփին
Չուարթացնէ քու հոգին:
Մանուկներու սերտ մտերիմ ծերք, ինդո՛ւն.
Մի՛ փոխանցէք ձեր սընամէջ երազներ,
Պա՛ր քաշեցէք սա խոտին վրայ դալարուն
Որու ներքեւ միայն փտին մեռեցներ...
— Մեռեն անշա՛հ, երազ՝ սին —
Այսօր գինիք թող հոսին:

a kindergarten song

Մանկապարտեզի Պարերգը

Ճ Ա Յ

Ես տեսայ մի թռչուն, առ - տու և ի - թիկուն,
 Ես սրնունդ կը ծա - րէր, ծը - նողքին հա - մար ծեր:
 Հայ, հայ, ճայ, ճայ. դե - րազ - նիւ հայ ցն - ծաւ
 Քու մա - նուկ - ներն կը - թէ և խնա - մէ ծերն:

ՊԱՏՈՒԵԱ ԶՀԱՅՐ ՔՈ...

Մանկապարտեզի պարերգը

Ճ Ա Յ (1)

Ես տեսայ մի թռչուն
 Առտու և իրիկուն
 Ես սրնունդ կը ծարէր,
 Ծընողքին համար ծեր: (Նաք.)
 Հայ, Հայ, ճայ, ճայ,
 Գերազիւ Հայ, ցնծաւ.
 Քու մանուկներն
 Կըթէ, և խնամէ ծերն:

Անըման այս թռչուն,
 Տիպարն է Հայորդուն,
 Որ երբեք չի լքեր
 Իր արկար ծնողքը ծեր:

Հայ, Հայ, ևն:

Ո՛չ ծերոց ապաստան
 Եւ ոչ ալ անկարան,
 Ձէ, մեր մէջ չբացուին,
 Մընաք ազնիւ ազգը հին:

Հայ, Հայ, ևն.

Ընտանի յարկն Հայուն,
 Ժըրջան և բեղուն,
 Մնայ հաճապետական
 Բարեսուն գերդաստան:

Հայ, Հայ, ևն.



(1) « Իբրեւ տեսանեն, տանն, ճայք զթեւս հօր իւրեանց թուլացեալ ի ծերութենէ, աստի և անտի մտանեն և բառնան զնա ի վերայ թեւոց իւրեանց, և խաղան զնան մեղմով, և ջամբեն նմա կերակուր ինչ զոր գտանեն »:

Բարսեղ. Վեցօրեայ Աբարչաւի-ն

The Country Girl

ՀԱՅ ԱՂՋԿԱՅ ԵՐԳ

(Չ Ա Ն Դ Ի Ի Լ Ի Ի Մ)

Allegro

Ես նա-պե-լի աղ-ջիկ եմ, Հայ գիւղա-ցի աղ-ջիկ
 Ինկիլիկին, Ֆրէնկին
 Խելքը ծոցէս կը հանեմ:

Ես սեւաչուի աղջիկ եմ,
 Վարդ աշտերով աղջիկ եմ,
 Ինձի նայող կարծին,
 Խելքը զլուէն կը հանեմ:

Հասակս աղուոր, աղուոր ծիծ,
 Սիրտըս մաքուր՝ սէրս ամրիծ.
 Մատուրներս են հիւնէրու,
 Մընած եմ ես սիրելու:

Երբ ուէտք ըլլայ՝ կը կռուիմ՝
 Թէ հարկ ըլլայ՝ կը մահիմ.
 Մահել զիտեմ, կը մաղեմ,
 Կարծին սիրտ կը տաղեմ:

ՀԱՅ ԱՂՋԿԱՅ ԵՐԳ

Ջան Գիւլիւմ

Ես նաղելի աղջիկ եմ,
 Հայ գիւղացի աղջիկ եմ,
 Ինկիլիկին, Ֆրէնկին
 Խելքը ծոցէս կը հանեմ:

Ես սեւաչուի աղջիկ եմ,
 Վարդ աշտերով աղջիկ եմ,
 Ինձի նայող կարծին,
 Խելքը զլուէն կը հանեմ:

Հասակս աղուոր, աղուոր ծիծ,
 Սիրտըս մաքուր՝ սէրս ամրիծ.
 Մատուրներս են հիւնէրու,
 Մընած եմ ես սիրելու:

Երբ ուէտք ըլլայ՝ կը կռուիմ՝
 Թէ հարկ ըլլայ՝ կը մահիմ.
 Մահել զիտեմ, կը մաղեմ,
 Կարծին սիրտ կը տաղեմ:

Հօրըս հետ արտ կը վարեմ,
 Մօրըս հետ ժամ կը վազեմ.
 Դէմըս ելլող կարծին
 Սիրտը գերի կը վարեմ:

Արեւակէզ հովին դէմ,
 Ուլ ու գառնուկ կ'արածեմ.
 Իրիկունն ալ առն դարձիս,
 Կաթը մածուն կը կաղեմ:

Պղտիկ պարտեզ մը ունիմ,
 Վարդ ու շուշան մէջն ունիմ,
 Դըրան ետեւ ամեն տան
 Կարծի սիրտ մը ունիմ:

Երբ առեկիս վրաս գայ,
 Աղաչէ կամ ըստառնայ՝
 Գլանայ թող, Տէրը վըկայ,
 Հոգին փորէն կը հանեմ:







au revoir

ԵՐԹԱՍ ԲԱՐՈՎ, ԳԱՍ ԲԱՐՈՎ

Adagio

pp

Un peu plus vite



Cantabile
pp

Agitato
fff

(1) Այս էջի Cantabile երևի տողերը առնուած են անգլիական Home ! Sweet Home ! երգէն:

Agitato
fff

dim. *cresc.*

ff

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL034617

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր Ը

- Ծիրանի Առեւելք, քերթուած, թարգմանութիւն անգլիերէնէ (սպառած)
 Մսֆիս իսառնարանէն, Զարդարեան գրատան, Պոլիս — 5 ֆր. 25 ղրշ. 2½ շիլ.
 Մեծ Վեպ. Հայ Դիւցազներգութիւն (տաղաչափեալ) » » »
 Զարդարեան գրատան
 Առաջ Պատշաճի Քերթուածներ և Նուագներ 5 ֆրանք, 40 ղրշ. 4 շիլին.
 Reveries on Stormy seas, Գ. տպագրութիւն, 4 ֆր. 55 ղրշ. 5 շիլին.
 Տպագրուած Անգլիա.
 Խոսրովային (Հայ Տարագրի Երգարանը) ձայնագրուած —
 Տպագր. Ներսէս, Փարիզ — 6 ֆր. 50 ղրշ. 4 շիլ. 1 տոլար.
 Այգեւսան, 25 ամեայ ամբողջական հաւաքածոյ լրագրական ամէն սեռէ յօդ
 ուածոց, անտիպ էջերու և երգերու, Տպ. Ներսէս, 80 ֆր. 50 շիլին.

Աշխատակցութեամբ ողբացեալ Նահատակ Տօթ. ՏԱՂԱՆԲԵՆԻ

Turkey and the Turk — 4 ֆրանք.
 The Young Turks and the Truth about, the Holocaust at Adana 5 frs.

Ասանալու համար դիմել հրատարակիչներուն կամ ներդնակին՝
A. ARDONTZ 7, Bridge Terrace Maidstone (Angletere)
 Ապառիկ ապսպրանքները անպատասխանի կը մնան

Հայ Տարագրի Երգարանին գլինն է՝ 6 ֆրանք, 50 ղրշ. 1 տոլար, 4 շիլին.
